ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2021թ. սեպտեմբերի 29-ից հոկտեմբերի 2-ը Արաբական Միացյալ Էմիրություններ կատարած գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝

Վահան Քերոբյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ Էկոնոմիկայի նախարար

3. Գործուղման վայրը և ժամկետները՝

Արաբական Միացյալ Էմիրություններ,ք. Դուբայ,2021թ. սեպտեմբերի 29-ից հոկտեմբերի 2-ը

4. Հրավիրող կողմը՝

Արաբական Միացյալ Էմիրություններ կառավարություն

5. Գործուղման նպատակը՝

Մասնակցություն «ԷՔՍՊՈ 2020-Դուբայ» համաշխարհային ցուցահանդեսի պաշտոնական բացման միջոցառումներին

6. Քննարկված թեմաները՝

- երկու երկրների միջև հետագա համագործակցության ամրապնդման և ընդլայնման վերաբերյալ հարցերի քննարկում
- Էքսպոյի թեմատիկ շաբաթներին և «Made in Armenia» քառօրյա ցուցահանդեսին հայկական ընկերությունների մասնակցության մասին՝ ընդգծելով, որ լավ հնարավորություններ են ստեղծված հայկական բիզնեսն արտահանելու և արաբական գործարար համայնքի ներդրումները Հայաստան բերելու մասին քննարկում:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Այցի շրջանակներում կազմակերպվել է հանդիպում ԱՄԷ կլիմայի փոփոխության և շրջակա միջավայրի նախարար Մարիամ Ալմհեյրի հետ: Հանդիպմանը մասնակցել են նախարարի տեղակալներ Նարեկ Տերյանը և Արման Խոջոյանը:

Հանդիպման արդյունքում պայմանավորվածություն է ձեռք բերվել այց կազմակերպել ԱՄԷ սուպերմարկետների ցանցերի ներկայացուցիչների համար՝ հայ արտադրողների հետ քննարկելու Արաբական Էմիրություններում հայկական ապրանքների ներկայացվածության հարցը: Պայմանավորվածություն է ձեռք բերվել երկու երկրների դիվանագիտական շրջանակների միջոցով աշխատանքներ իրականացնել այդ ուղղությամբ:

Այցի ընթացքում կայացել է նաև հանդիպում ԱՄԷ արտաքին առևտրի նախարար Թանի Բին Ահմեդ Ալ Զեյուդիինի հետ: Արաբ գործընկերոջ հետ քննարկվել են հարցեր երկու երկրների միջև հետագա համագործակցության ամրապնդման և ընդլայնման վերաբերյալ: Խոսվել է նաև Էքսպոյի թեմատիկ շաբաթներին և «Made in Armenia» քառօրյա ցուցահանդեսին հայկական ընկերությունների մասնակցության մասին՝ ընդգծելով, որ երկուստեք լավ հնարավորություններ են ստեղծված հայկական բիզնեսն արտահանելու և արաբական գործարար համայնքի ներդրումները Հայաստան բերելու առումով: Արաբ գործընկերոջ հետ քննարկվել են հարցեր երկու երկրների միջև հետագա համագործակցության ամրապնդման և ընդլայնման վերաբերյալ: Թանիին առաջարկվել է դիտարկել ԱՄԷ ընկերությունների կողմից ՀՀ-ում ներդրումների իրականացման հնարավորությունը: Առաջարկն ընդունվել է հետաքրքրությամբ և ձեռք է բերվել պայմանավորվածություն՝ ներկայացնել արաբական կողմին տարբեր ոլորտներում խոշոր ներդրումային ծրագրեր: Խոսվել է նաև Էքսպոյի թեմատիկ շաբաթներին և «Made in Armenia» քառօրյա ցուցահանդեսին հայկական ընկերությունների մասնակցության մասին՝ ընդգծելով, որ երկուստեք լավ հնարավորություններ են ստեղծված հայկական բիզնեսն արտահանելու և արաբական գործարար համայնքի ներդրումները Հայաստան բերելու առումով:

Հայկական տաղավարի բացմանը ներկա էր նաև ՌԴ արդյունաբերության և առևտրի նախարարի տեղակալ Ալեքսեյ Գրուզդևը: Հոկտեմբերի 1-ին հայկական

պատվիրակությունը մասնակցել է ցուցահանդեսում Ռուսաստանի Դաշնության տաղավարի պաշտոնական բացմանը:

ԱՄԷ կլիմայի փոփոխության և շրջակա միջավայրի նախարար Մարիամ Ալմհեյրի հետ հանդիպման ընթացքում քննարկվել է երկու երկրների միջև «Պարենի և ջրի անվտանգության մասին» փոխըմբռնման հուշագրի ստորագրման հարցը: Պայմանավորվածություն է ձեռք բերվել մասնագետների համագործակցությամբ այն վերջնական տեսքի բերելու և մոտ ապագայում ստորագրելու վերաբերյալ: Ինչպես նաև պայմանավորվածություն է ձեռք բերվել ԱՄԷ սուպերմարկետների ցանցերի ներկայացուցիչների այցելությունը Հայաստան՝ Արաբական Էմիրություններում հայկական ապրանքների ներկայացվածության հարցը քննարկելու նպատակով:

8. Ստորագրությունը, ամսաթիվը՝ 05/10/2021